

Տպագրված է 2 օրինակ, օրինակ _____

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

19.12.2003թ.

Գրանցման թիվ 273.130.03674

ՀՎՀՀ՝ 01503291

19.12.2003թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից _____._____._____.թ.
աշխատակից

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ»

Բաց բաժնետիրական ընկերություն
__ հունիսի 2020թ. կայացած
ընկերության հիմնադիր ժողովում
Խորհրդի նախագահ`

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» բաց բաժնետիրական ընկերությունը/հետագայում Ընկերություն/ հանդիսանում է «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

1.2 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման/ պահից:

1.3 Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական Օրենսգրքով /այսուհետ՝ Օրենսգիրք/ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքով /այսուհետ՝ Օրենք/, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.5 Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության հետ կապված վնասների ռիսկեր:

1.6 Եթե Ընկերության անվճարունակության /անանկացման/ պատճառ են հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները /անգործությունը/, որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ այլ կերպ Ընկերության գործունեությունը կանխորոշելու իրավունք, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում նշված բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ պատասխանատվություն Ընկերության պարտավորություններով:

1.7 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8 Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ռեկվիզիտներ:

1.9 Ընկերության ֆիրմային անվանումն է.

հայերեն լրիվ՝ «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» բաց բաժնետիրական ընկերություն

հայերեն կրճատ՝ «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

ռուսերեն լրիվ՝ «АРМПРОЕКТ» Акционерное Общество Открытого Типа

ռուսերեն կրճատ՝ «АРМПРОЕКТ» АООТ

անգլերեն լրիվ՝ «ARMPROJECT» Open Joint Stock Company

անգլերեն կրճատ՝ «ARMPROJECT» OJSC

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2 Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- տարածքային հատակագծում, քաղաքների, գյուղերի, արդյունաբերական հանգույցների գլխավոր հատակագծերի մշակում,
- բնակելի, հասարարական, արդյունաբերական շենքերի զինվորական և քաղաքացիական պաշտպանության, բնապահպանման, կոմունալ տնտեսության սպասարկման,

տրանսպորտի շահագործման և այլ ինժեներական օբյեկտների նախագծում, հետազոտություններ, ինժեներա-երկրաբանական հետախուզական աշխատանքներ և գեոդեզիական հանույթներ,

- գիտական և գիտատեխնիկական արտադրանքի թողարկում (գիտական և գիտատեխնիկական մշակումներ, տնտեսագիտական և տեխնիկական հարցերի գծով ձեռնարկներ, նորմատիվ փաստաթղթեր և այլն),
- ձեռնարկություններին, կազմակերպություններին և քաղաքացիներին խորհրդատվական, միջնորդ, կենցաղային, տրանսպորտային և այլ ծառայությունների մատուցում,
- որակավորման բարձրացման ուսուցում:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով չարգելվող ցանկացած գործունեություն:

2.4 Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվելու այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեությունների, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ կամ համատեղումը թույլատրվում է:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով. այնպես էլ արտարժույթով:

3.2 Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով՝ Ընկերության բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ իրավական ակտերին համապատասխան:

3.3 Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության հիմնադիր /մասնակից/ բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

3.4 Ընկերությունն իրավունք ունի.

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը, օտարել, վարձակալության տակ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ,
- լինել գրավառու և գրավատու, ինքնուրույն կազմակերպել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ,

- Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ:
- ունենալ միջոցներ արտարժույթով,
- օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել /այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք/ արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,
- օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա անձանց և /կամ/ ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և /կամ/ ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնարկությունների,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5 Ընկերությունը պարտավոր է.

- ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ, պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտապանների օրինական գույքային պահանջները,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի /Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների, նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի պահպանումը,
- Պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին,

- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ՇԻՄՆԱՐԿՆԵՐ, ԴՈՒՍՏՐ ԵՎ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր և ներկայացուցչություններ/, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

Ընկերության մասնաճյուղ է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս և իրավունք ունի իրականացնել Ընկերության բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը, ներառյալ ներկայացուցչական գործառույթները:

Ընկերության ներկայացուցչություն է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

4.2 Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության դուստր ընկերություն, եթե Ընկերությունը այդ ընկերության կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները: Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության կախյալ ընկերություն, եթե Ընկերությունն ունի այդ ընկերության բաժնետոմսերի /քվեարկող բաժնետոմսերի/ ավելի քան 20%-ը:

Օտարերկրա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Դուստր ընկերությունը պարտավորություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության այն գործարքների համար, որոնք կատարվում են ի իրականացումն Ընկերության կողմից տրված և դուստր ընկերության համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին:

Ընկերության մեղքով դուստր ընկերության անվճարունակության դեպքում Ընկերությունը լրացուցիչ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտավորությունների համար:

Դուստր ընկերության բաժնետերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել նրա մեղքով դուստր ընկերությանը պատճառած վնասների հատուցում: Վնասները Ընկերության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից Ընկերության պարտադիր ցուցումներ կատարելու հետևանքով:

Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու Ընկերության թողարկված բաժնետոմսերը:

4.3 Ընկերությունը ՀՀ տարածքում և արտասահմանում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5.1 Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական հիմնադրամը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի կողմից ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

5.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 75480000 (յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) դրամ, որը բաժանված է 7548 (յոթ հազար հինգ հարյուր քառասունութ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10000 (տաս հազար) դրամ անվանական արժեքով:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 10000 (տաս հազար) հատ՝ յուրաքանչյուրը 10000 (տաս հազար) դրամ անվանական արժեքով: .

5.3 Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոփոխել (մեծացնել կամ փոքրացնել) բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունները կատարելուց և ձեռնարկությունների պետական ռեգիստրում Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

5.4 Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել.

ա/ Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման միջոցով:

բ/ Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին, միայն հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի.

- լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր ձևի արտոնյալ բաժնետոմսերի քանակը հայտարարված քանակի սահմաններում.
- լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում Ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի տերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

գ/ Ընկերությունը իր գործունեության ֆինանսական այլընտրանքները ամփոփելուց հետո կարող է.

- շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր,

ընկերության գուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցել կանոնադրական կապիտալ:

5.5 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը կարող է կատարվել.

ա/ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,

բ/ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերությունը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին իրենց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի, հետգնման գնի և իրականացման կարգի մասին:

Բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման դեպքերում գույքի շուկայական արժեքի սահմանումը անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից պարտադիր է:

Բաժնետոմսերի քանակը կրճատելիս կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետգնման ընկերության կողմից դրանց շուկայական արժեքով:

Ընկերությունն իրավունք չունի փոքրացնել իր կանոնադրական կապիտալը օրենքով սահմանված նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Ընկերությունն իրավունք ունի ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը Ընկերության խորհրդի որոշմամբ, եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ խորհրդին նշված հարցերով որոշումներ կայացնելու լիազորություններ է տրամադրվել:

Կանոնադրական կապիտալի չափի փոքրացման հետևանքով մեկ տարուց ոչ պակաս ժամկետում Ընկերությանը չվերադարձված բաժնետոմսերը կարող են համարվել անվավեր: Դրանց փոխարեն Ընկերությունը կարող է թողարկել նոր բաժնետոմսեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացում կատարելու մասին որոշում ընդունելու ժամկետից 30 օրվա ընթացքում գրավոր ծանուցվում է այդ մասին իր պարտատերերին:

Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Ընկերությունից պահանջել վերջինիս պարտավորությունների դադարում կամ վաղաժամկետ կատարում և դրա հետ կապված վնասների հատուցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման պատճառով բաժնետերերին վճարումները, բացառությամբ ընկերության գուտ ակտիվների արժեքն ընկերության կանոնադրական կապիտալի չափից պակասելու հիմքով կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքի, կատարվում են սույն կանոնադրության փոփոխությունները պետական գրանցում կատարելուց հետո:

Ընկերության գուտ ակտիվների արժեքն ընկերության կանոնադրական կապիտալի չափից նվազելու հիմքով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

5.6 Ընկերությունը ունի պահուստային հիմնադրամ, որը կազմում է կանոնադրական կապիտալի 15%-ը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5%-ի չափով, ինչպես նաև ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացված միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթն այդ նպատակի համար չի բավականացնում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

5.7 Ընկերությունը կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ:

5.8 Ընկերության գուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա

Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅՆ ԱՐԺԵՊՊԵՐԸ

6.1 Ընկերությունը կարող է տեղաբաշխել.

- բաժնետոմսեր.
- պարտատոմսեր.
- մուրհակներ.
- հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր.
- փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր.
- կուտակման արտոնյալ բաժնետոմսեր.
- փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր.
- օրենքով չարգելված այլ տեսակի արժեթղթեր:

6.2 Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական) և մեկ կամ մի քանի ձևի արտոնյալ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

6.3 Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերն ունեն միևնույն անվանական արժեքները:

Ընկերության միևնույն տեսակի արտոնյալ բաժնետոմսերը ունեն միևնույն անվանական արժեքը:

6.4 Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ սահմանված կարգով:

6.5 Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

6.6 Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել նյութական արժեքները, արժեթղթերը, մտավոր (արտադրական) սեփականությունը, դրամական միջոցները:

6.7 Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանվում են այդ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ:

6.8 Ընկերությունն իրավունք ունի թողարկել Ընկերության որոշակի տեսակի (տեսակների) բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթեր: Ընկերությունն իրավունք չունի սահմանափակել այդ տեսակի (տեսակների) բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները առանց վերջիններիս համաձայնության:

6.9 Բաժնետոմսն անբաժանելի է: Երկու կամ ավելի անձանց մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանալու դեպքում նրանք ընկերությունում հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր:

6.10 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.11 Ընկերության բաժնետոմսերն անցնում են բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին:

6.12 Պարտատոմսերի, մուրհակների և այլ արժեթղթերի, բացառությամբ բաժնետոմսերի, տեղաբաշխումն իրականացվում է խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

6.13 Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված բոլոր պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի

կանոնադրական կապիտալի մեծությունը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով:

6.14 Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

6.15 Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ, Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ, մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն:

6.16 Ընկերությունը կարող է թողարկել.

- ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր,
- երրորդ անձանց կողմից տրամադրված ապահովությամբ երաշխավորված պարտատոմսեր,
- առանց ապահովման պարտատոմսեր, որի թողարկումը թույլատրվում է Ընկերության գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն Ընկերության առնվազն երկու տարվա հաշվեկշիռները:

6.17 Պարտատոմսերը կարող են թողարկվել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի: Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի համար պարտադիր վարվում է ռեեստր: Կորցրած անվանական արժեթղթերը վերականգնվում է Ընկերության կողմից քանակական վճարի դիմաց: Կորցրած ներկայացուցչական պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6.18 Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:

6.19 Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր, մուրհակներ և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր, մուրհակներ և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթերն Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

6.20 Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ անկախ Ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, տարեկան տոկոսները պարտատոմսի տիրոջը կարող են չվճարել, որը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսում:

6.21 Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

6.22 Տպագրական եղանակող պատրաստված պարտատոմսը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

6.23 Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է սահմանված կարգով Ընկերության դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ ծանուցվեն բաժնետոմսերի ձեռքբերման

օրենքով սահմանված նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին և իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերին համամասնորեն, բացառությամբ բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքերի, երբ Ընկերության բաժնետերերը չունեն ձեռքբերման նախապատվության իրավունք: Ծանուցումը պետք է ներկայացվի Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

7. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱՂԻՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

7.1 Ընկերության աշխատակիցներին կարող են տրամադրվել աշխատակցի բաժնետոմսեր, որոնք կարող են լինել հասարակ (սովորական) կամ արտոնյալ: Աշխատակցի բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության աշխատակիցների միջև՝ այդ նպատակի համար աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամի միջոցների հաշվին՝ ընկերության կողմից իր բաժնետերերից հետ գնած բաժնետոմսերից:

Աշխատակցի բաժնետոմսերի մասը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

7.2 Աշխատակցի բաժնետոմսը Ընկերության աշխատակցին արտոնյալ պայմաններով վաճառված անվանական բաժնետոմս է, որի շրջանառության ժամկետը սահմանափակված է 3 տարով՝ սկսած դրանց տեղաբաշխման օրվանից:

Աշխատակիցների բաժնետոմսերը տեղաբաշխվում են աշխատակիցների միջև հետևյալ պայմանները բավարարելուց հետո.

ա/ տվյալ ընկերությունում աշխատակցի աշխատանքային փորձը չպետք է պակաս լինի 3 տարուց,

բ/ աշխատակիցներին բաժնետոմս տրամադրվում են վերջիններիս համաձայնությամբ և նրանց կողմից ներկայացված դիմումի համաձայն,

գ/ բաժնետոմսերի դիմաց վճարվող գումարը չպետք է պակաս լինի անվանական արժեքի 25տոկոսից:

7.3 Աշխատակիցները իրավունք չունեն բաժնետոմսերի տեղաբաշխումից հետո երեք տարվա ընթացքում օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

7.4 Եթե բաժնետոմսերի տեղաբաշխումից հետո մինչև երեք տարին լրանալը աշխատակցի հետ դադարեցվում են աշխատանքային հարաբերությունները, ապա աշխատակիցը կարող է օտարել իր բաժնետոմսերը միայն այն դեպքում, եթե վճարի իրեն որպես աշխատակից Ընկերության կողմից բաժնետոմսեր ձեռք բերելու համար նախատեսված գումարային զեղչը և պայմանով, որ պետք է վաճառի կամ Ընկերության մյուս աշխատակիցներին, կամ Ընկերությանը:

Աշխատակցի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում, բացի կենսաթոշակի անցնելու դեպքերից, Ընկերությունը նախապատվության իրավունք ունի հետ գնել աշխատակցի բաժնետոմսերը շուկայական գնով, սակայն անվանական արժեքից ոչ պակաս:

7.5 Աշխատակցի բաժնետոմսերի մահացած տիրոջ ժառանգորդները իրավունք ունեն Ընկերությունից պահանջել դրանց հետ գնումը շուկայական գնով, սակայն անվանական արժեքից ոչ պակաս, կամ պահանջել դրանք փոխարկել Ընկերության այլ բաժնետոմսերի, եթե այդպիսիք հայտարարված են Ընկերության կողմից, միայն այն դեպքում, եթե վճարեն աշխատակցի բաժնետոմսեր ձեռք բերելու համար նախատեսված գումարային զեղչը:

7.6 Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են սույն օրենքով և կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար: Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության

հասարակ (սովորական) և համապատասխան դասի արտոնյալ արժեքի անվանական արժեքից, բացառությամբ սույն կանոնադրության 7.2 կետով նախատեսված դեպքի:

7.7 Աշխատակիցների բաժնետոմսերի տեղաբաշխման, դրանց դիմաց վճարման և աշխատակիցների արտոնությունների սահմանման կարգի մասին որոշումը կայացնում է ժողովը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

8.1 Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:

Բաժնետերն իրավունք ունի.

ա/ մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ/ մասնակցել Ընկերության կառավարմանը,

գ/ ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

դ/ առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան,

ե/ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում գրավոր դիմում ներկայացնելով Տնօրենին, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,

զ/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները լիազորել երրորդ անձի,

է/ հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

ը/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

թ/ հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ժ/ Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

ի/ Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր,

լ/ օտարել կամ այլ ձևով փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,

խ/ իրեն պատկանող բաժնետոմսերը վաճառել Ընկերությանը, եթե այդ տեսակի կամ ձևի բաժնետոմսը սահմանված Կարգով ենթակա է ձեռքբերման Ընկերության կողմից,

ծ/ առանց ընտրության ընդգրկվել Ընկերության խորհրդի կազմում, եթե տիրապետում է ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին,

կ/ պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի գումարում, եթե տիրապետում է ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին,

հ/պահանջել վերստուգող հանձնաժողովից (վերստուգողի) իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում, եթե տիրապետում է ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին,

ձ/ պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով, եթե տիրապետում է ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 5 և ավելի տոկոսին: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը:

8.2 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

8.3 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը (արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները) վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը:

8.4 Ընկերության որոշակի ձևի յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմս տրամադրում է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

8.5 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունք ունեն, եթե քննարկվում են Ընկերության վերակազմավորման կամ լուծարման, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցմանը, հաշվարկմանը և (կամ) վճարման կարգի փոփոխություններին վերաբերող հարցերը:

8.6 Բաժնետերերը պարտավոր են.

ա/ չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ,

բ/ օժանդակել Ընկերությանը վերջինիս գործունեության իրականացման գործում:

8.7 Բաժնետիրոջը սեփականության իրավունքով պատկանող ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի գումարային քանակը չի կարող գերազանցել Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 3%-ից:

8.8 Բաժնետիրոջը սեփականության իրավունքով պատկանող և լիազորագրով կամ այլ կերպ հանձնված բաժնետոմսերի գումարային քանակը չի կարող գերազանցել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 5%-ից:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի և ձևի համար հայտարարված շահութաբաժինները՝ ՀՀ դրամով:

9.2 Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ գուտ շահութից: Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

9.3 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումը ընդունվում է խորհրդի կողմից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումը ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և սովյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

9.4 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան սովյալ որոշման ընդունման պահից 30 օր անց: Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում:

10.2 Եթե Ընկերության խորհուրդը սահմանված ժամկետում բաժնետերերի տարեկան ժողով չի գումարում, ապա դրա գումարումն ու անցկացումը կարող է կազմակերպվել Ընկերության 25 և ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համատեղ նախաձեռնությամբ:

10.3 Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

10.4 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները.

ա/ կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը,

բ/ Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

գ/ Ընկերության վերակազմակերպումը,

դ/ Ընկերության լուծարումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը,

ե/ Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության խորհրդի անդամների ընտրության հարցն Ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ բաժնետոմսերի անվանական արժեքի պակասեցման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերման, Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը,

ը/ Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը, գործունեության կարգի, վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերի, պայմանների սահմանումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցն Ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

թ/ Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժ/ Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում,

ի/ բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռք բերման բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

լ/ ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

խ/ Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

ծ/ Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով նախատեսված դեպքերում,

կ/ Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը համաձայն ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի,

հ/ Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամ) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:

ձ/ շահագրգռվածությամբ առկայությամբ գործարքի կնքման մասին որոշման ընդունում օրենքով նախատեսված դեպքերում:

10.5 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար ընկերության խորհրդին, բացառությամբ եթե դա թույլատրվում է օրենքով և ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված է իրավասությունների լիազորումը այլ կառավարման մարմնի: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով չեն սահմանվել որպես ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն:

10.6 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ.

ա. սույն կանոնադրության 10.4 կետի բ, գ, դ, զ, է և ծ ենթակետերով նախատեսված դեպքերի: Նշված դեպքերում որոշում ընդունվում է ժողովին մասնակցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով, բացառությամբ Ընկերության լուծարման և սույն կանոնադրության 10.4 կետի է ենթակետի, երբ որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի $\frac{3}{4}$ -ով, սակայն ոչ պակաս քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{2}{3}$ -ից.

բ. սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ, Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է հաղորդվեն բաժնետերերին: Բաժնետերերն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նրանք չեն մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել և որոշմամբ խախտել են նրա օրինական շահերը և իրավունքները:

10.7 Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն սովոր միջոցներով փոխանակելու եղանակով:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

10.8 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն, իրենց պատկանող լրիվ վճարված հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամներն, ինչպես նաև մասնագետներ՝ խորհրդի կամ քվեարկելու իրավունք սովոր բաժնետոմսերի 25 և ավել տոկոս բաժնետերերի ընդհանուր հրավերով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), հասցեի (գտնվելու վայրի) և բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի մասին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք սովոր բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է տեղեկություններ տրամադրել բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրան ընդգրկելու մասին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են արվել միայն ցուցակի կազմման ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքների և շահերի վերականգնման նպատակով:

10.9 Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձիք, ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են Կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընկերության ժողովի գումարման մասին գրավոր ծանուցվում են վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը), ինչպես նաև Ընկերության աուդիտն իրականացնող անձը, եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում:

Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա/ Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.

բ/ ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, հեռակա քվեարկության դեպքում՝ քվեաթերթիկները ներկայացնելու և ձայների հաշվարկման վերջնաժամկետը, ինչպես նաև քվեաթերթի լրացման հակիրճ ուղեցույց.

գ/ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ/ ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե/ բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում: Թույլատրվում է նյութերի տեղադրումը էլեկտրոնային համակարգերում՝ ապահովված պաշտպանության պատշաճ մակարդակով, և այդ դեպքում ծանուցման մեջ պետք է ներկայացվի տեղեկություններ նյութերին հասանելիության վերաբերյալ:

Ընկերությունը պարտավոր է ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ, իսկ բաժնետերերի քանակը 50-ից պակասելու դեպքում առնվազն 10 օր առաջ: Նշված կանոնը տարածվում է նաև սույն կանոնադրության 10.14 կետով նախատեսված նոր ժողովի գումարման դեպքերի վրա:

10.10. Տարեկան ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

ա/ Ընկերության տարեկան հաշվետվությունը.

բ/ Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

գ/ տեղեկություններ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) առաջադրվող թեկնածուների մասին (եթե նման հարց առկա է օրակարգում).

դ/ կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ (օրակարգում նման հարցի առկայության դեպքում):

ե/ քվեաթերթիկը, եթե քվեարկությունն իրականացվում է հեռակա կարգով:

զ/ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ պարտադիր տրամադրման տեղեկատվություն:

10.11 Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

10.12 Ընկերության բաժնետերը (բաժնետերերը) որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են), Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 75 օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի

առաջարկություններ ներկայացնել խորհրդին ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուներ (եթե խորհրդի և վերստուգող հանձնաժողովի ընտրության ժամկետն է):

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) ազգանունը և անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի, ինչպես նաև առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

Խորհուրդը վերը նշված ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում քննարկում է ներկայացված առաջարկությունները և ընդունում համապատասխան որոշում արված առաջարկությունները ընդհանուր ժողովում քննարկման դնելու մասին:

10.13 Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջ ներկայացնելու դրությամբ առնվազն 10 տոկոսի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին: խորհրդի իրավասությունները և պարտավորությունները արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասով սահմանվում են օրենքով:

10.14 Ընկերության ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

Եթե Ընկերության բաժնետերերին հեռակա կարգով անց կացվող ժողովի քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողով: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Նոր ժողովն իրավասու է, եթե մասնակցող բաժնետերերը համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին, իսկ բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում, եթե օրը տեղափոխվել է 20 օրից պակաս ժամկետով:

10.15 Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է Ընկերության մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս մեկ ձայնի իրավունք սկզբունքով:

Քվեարկությունները կարող են կատարվել քվեաթերթիկների միջոցով, որի ձևը և բովանդակությունը հաստատվում է խորհրդի որոշմամբ:

10.16 Քվեաթերթիկների միջոցով քվեարկություն անցկացնելու դեպքում Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կամ նրա ֆունկցիաները իրականացնող անձի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները գնոսվում և հանձնվում են Ընկերության արխիվ պահպանության: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ ժողովում, կամ ժողովի ավարտից հետո

բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության արդյունքներին՝ սույն կանոնադրությամբ նախատեսված ձևով բաժնետերերին ուղարկելու միջոցով:

10.17 Ընկերության ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, երկու օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և ժողովի քարտուղարի կողմից: Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ծանոթանալու ընդհանուր ժողովի արձանագրություններին:

10.18 Ընկերության խորհուրդը իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերվում են Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

10.19 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարզևավճար կամ փոխհատուցում պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի դիմաց:

10.20 Խորհրդի իրավասություններն են՝

ա/ Գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

բ/ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր և արտահերթ ժողովների գումարումը՝ բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն դեպքի, երբ ժողովը հրավիրվում է բաժնետերերի կողմից,

գ/ Ժողովի օրակարգի հաստատումը,

դ/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ,

ե/ Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, բացառությամբ բաժնետոմսերի.

զ/ Գույքի շուկայական արժեքի որոշումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում,

է/ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

ը/ Ընկերության գործադիր մարմնի /գործադիր տնօրենի, վարչության/ ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները,

թ/ Ընկերության վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ վարձատրության և ծախսերի փոխհատուցման կարգի և պայմանների վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,

ժ/ Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,

ի/ Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը,

լ/ Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

խ/ Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ծ/ Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

կ/ Ամենամյա ծախսերի նախահաշվի (բյուջեի և դրանում փոփոխությունների) և դրա կատարողականի հաստատումը: Սույն լիազորությունը խորհրդի որոշմամբ և խորհրդի կողմից սահմանված ժամկետում կարող է փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին.

հ/ Այլ կազմակերպություններին մասնակցելու հարցի որոշումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որի հաստատումը հանդիսանում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն.

ձ/ Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը, Սույն լիազորությունը խորհրդի որոշմամբ և խորհրդի կողմից սահմանված ժամկետում կարող է փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին:

դ/ Դուստր ընկերությունների, Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը:

Ճ/ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքում՝ օրենքով նախատեսված դեպքերում

ւ/ շահագրգռվածությամբ առկայությամբ գործարքի կնքման մասին որոշման ընդունում օրենքով նախատեսված դեպքերում,

յ/ խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի,

ն/ սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ հարցերի լուծում:

10.21 Ընկերության խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

10.22 Խոշոր գործարքի կատարման մասին որոշումը պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, հակառակ դեպքում որոշման կայացման լիազորությունը փոխանցվում է ընդհանուր ժողովին:

10.23 Խորհրդի անդամները ընտրվում են Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կամ արտահերթ ընդհանուր ժողովում անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում: Ընկերության բաժնետերը (բաժնետերերը) որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են), իրավունք ունեն առաջարկել Խորհրդի անդամի թեկնածուներ (այդ թվում՝ անկախ անդամի թեկնածուներ):

Առաջարկությունների հիման վրա կազմվում է թեկնածուների ցուցակ: Ցուցակում ընդգրկված անկախ անդամի թեկնածուների կողքին կատարվում է նշում անկախ անդամի թեկնածու հանդիսանալու վերաբերյալ:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները: Այն պարագայում, երբ ընտրված տասը անդամների թվում ապահովված չէ առնվազն երեք անկախ անդամ, ապա ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած յոթ ոչ անկախ անդամները և ձայների առավելագույն քանակ ստացած երեք անկախ անդամները:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

10.23.1. Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, որը՝

ա/ վերջին երեք տարվա ընթացքում Ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ:

բ/ վերջին երեք տարվա ընթացքում Ընկերությունից կամ Ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրության:

գ/ վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել եական որևէ գործարար հարաբերություն Ընկերության և (կամ) Ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ:

դ/ վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող:

ե/ վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Ընկերության խորհրդի անդամ:

զ/ չի հանդիսանում Ընկերության նշանակալից բաժնետեր:

է/ վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող:

ը/ չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «զ» կետի իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

10.24 Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:

10.25 Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

10.26 Խորհրդը կազմված է տասն անդամից, որոնցից երեքը՝ անկախ:

Խորհրդի անդամ կարող են լինել ինչպես բաժնետեր հանդիսացող, այնպես էլ Ընկերության բաժնետեր չհանդիսացող գործունակ ֆիզիկական անձիք:

Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդի կազմում մեծամասնություն կազմել:

10.27 Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից, խորհրդի անդամների կազմից, խորհրդին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել:

Խորհրդի նախագահը կարող է ունենալ տեղակալ, որը նույնպես ընտրվում է խորհրդի անդամների կողմից խորհրդի անդամների կազմից, նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունների կատարումն իրականացնում է խորհրդի նախագահի տեղակալը:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին, կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

10.28 Ընկերության խորհրդի նախագահը կազմակերպում է ընկերության խորհրդի աշխատանքները, գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանցում, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

Ընկերության խորհրդի նախագահի կամ խորհրդի նախագահի տեղակալի բացակայության դեպքում նրա պարտականությունները՝ խորհրդի որոշմամբ կատարում է Ընկերության խորհրդի անդամներից որևէ մեկը:

10.29 Ընկերության խորհրդի նիստերը գումարվում են ինչպես ընկերության խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, այնպես էլ խորհրդի անդամի, վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ առաջին իրականացնող անձի, տնօրենի պահանջով:

Խորհրդի նիստը իրավագոր է, եթե նիստին մասնակցում են խորհրդի, անդամների կեսից ավելին /հեռակա կարգով քվեարկության դեպքում խորհրդի անդամների կեսից ավելի լրացված քվեաթերթիկների ստացման պարագայում: Խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ և օրենքով:

Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է տնօրենը, եթե տնօրենը միաժամանակ չի հանդիսանում խորհրդի անդամ:

Խորհրդի նիստերի կարող են որպես զեկուցողներ մասնակցել վերստուգող հանձնաժողովի նախագահը կամ աուդիտորը, եթե քննարկվում է նրանց եզրակացությունը կամ դրան առնչվող հարցեր:

Խորհրդի նիստերին խորհրդի անդամների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել ընկերության աշխատակիցներ՝ իրենց իրավասությունների սահմաններում խորհրդին պարզաբանումներ տրամադրելու համար:

10.30 Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուս անդամին չի թույլատրվում:

Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Ձայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում:

10.31 Ընկերության խորհրդի նիստերը արձանագրվում են նիստի ավարտից 5 օրյա ժամկետում:

Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատու են արձանագրության ճշտության համար:

Խորհրդի նիստերի արձանագրությունները կազմվում են խորհրդի քարտուղարի կողմից, ով ընտրվում կամ նշանակվում է Խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով: Խորհրդի նիստերի քարտուղարը պատասխանատվություն է կրում նաև խորհրդի նիստերի ծանուցումների պատրաստման և անդամների ուղարկման, խորհրդի նիստերի նյութերի հավաքման, համակարգման և խորհրդի անդամներին տրամադրման համար:

Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել հետևյալ առկա քվեարկության եղանակներից որևէ մեկով.

- անդամներին մեկ վայրում ներկա գտնվելու միջոցով,
- հեռախոսային կամ կապի այլ միջոցներով խորհրդի անդամներին միաժամանակյա մասնակցությամբ սեանսի միջոցով:

10.32 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ վերը նշված, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

10.33 Ընկերության տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Ընկերության խորհրդի նախագահը:

10.34 Ընկերության տնօրենը՝

ա/ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

բ/ առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,

գ/ ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

դ/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

ե/ տալիս է լիազորագրեր,

զ/բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

է/ Ընկերության խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը և Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, եթե խորհրդի որոշմամբ նշվածի հաստատման լիազորությունը փոխանցված չէ Ընկերության տնօրենին,

ը/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ տալիս, ցուցումներ և ստուգում դրանց կատարումը,

թ/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում աշխատանքից ընկերության աշխատակիցներին,

ժ/ աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

10.35 Ընկերության խորհրդի անդամները, տնօրենն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով Ընկերության շահերից, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են Ընկերության խորհրդի այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառված որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է վերստուգող հանձնաժողովը /վերստուգող/, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ անդամներ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք:

11.2 Վերստուգող հանձնաժողովը /վերստուգող/ հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը:

11.3 Վերստուգող հանձնաժողովը /վերստուգող/ իրավունք ունի իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության ձայների իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

11.4 Վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ պահանջով նրան պետք է տրամադրվեն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

11.5 Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ Վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ եզրակացությունը պարտադիր է:

11.6 Ընկերության գործադիր մարմինը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի, հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունը պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունների համար:

11.7 Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Ընկերության խորհրդի կողմից:

11.8 Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության Վերստուգող հանձնաժողովի /վերստուգող/ եզրակացությամբ:

11.9 Վերը նշված փաստաթղթերը հրապարակելիս Ընկերությունը պարտավոր է ամենամյա ֆինանսական հաշվետվության վերստուգման համար ներգրավել աուդիտորի /կազմակերպության կամ ֆիզիկական անձի/, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա մասնակիցների հետ:

11.1. ԱՈՒԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

11.1.1. Ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

11.1.2. Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհուրդը իր անդամներից ընտրում է Աուդիտի հանձնաժողով, որը կազմված է երեք անդամից: Ընկերության բաժնետերերը (բաժնետերերը) որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են), իրավունք ունեն առաջարկել Աուդիտի հանձնաժողովի անդամի թեկնածուներ:

Աուդիտի հանձնաժողովի կազմում ընտրված են համարվում Խորհրդի անդամների ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները: Եթե ձայների առավելագույն քանակ ստացած բոլոր երեք թեկնածուները խորհրդի ոչ անկախ անդամ են, ապա Աուդիտի հանձնաժողովում վերջին անդամությունը տրվում է ձայների առավելագույն քանակ ստացած խորհրդի անկախ անդամին:

11.1.3. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է Ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

11.1.4. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

11.1.5. Աուդիտի հանձնաժողովը՝

ա/ իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում)։

բ/ իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացում։

գ/ իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում։

դ/ խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ։

ե/ իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն։

զ/ տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ։

է/ իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին։

ը/ հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը։

թ/ իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը։

11.1.6. Ընկերության ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել Աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

12.1 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը տեղի է ունենում բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ կամ խորհրդի միաձայն որոշմամբ:

12.2 Մասնաճյուղի և /կամ/ ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունների հետ կապված կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրանցում իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

12.3 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական գրանցում իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

13.1 Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

13.2 Ընկերության լուծարման հիմքերն են.

ա/ դատարանի կողմից Ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը,

բ/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում Ընկերության առանց իրավահաջորդի լուծարման մասին ընդունված որոշումը,

գ/ Ընկերությունը սնանկ հայտարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը,

դ/ Ընկերությունը լուծարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

13.3 Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը լուծարման մասին ներկայացվում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին:

13.4 Բաժնետերերի ընդհանուր ժողովը նշանակում է լուծարման հանձնաժողով և սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Նշանակման պահից լուծարման հանձնաժողովին են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները:

Լուծարման ժամանակահատվածում ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

13.5 Առնվազն 10 տոկոսի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն ընդգրկվել լուծարման հանձնաժողովի կազմում:

13.6 Ընկերության լուծարումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում հաստատված լուծարման կարգին համապատասխան:

13.7 Լուծարման հանձնաժողովն <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում Ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Այդ ժամկետը սահմանվում է ոչ պակաս քան երկու ամիս, սկսած լուծարման մասին հրապարակման պահից:

Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքը ստանալու ուղղությամբ և նրանց տեղեկացնում է ընկերության լուծարման մասին:

13.8 Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ

է պարունակում Ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների քննարկման արդյունքների մասին:

Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը:

13.9 Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը: Հաստատված լուծարման հաշվեկշիռը հանձնաժողովը ներկայացնում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին:

13.10 Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

13.11 Ընկերության լուծարման հետ կապված այն հարցերը, որոնք պարզաբանված չեն կանոնադրությամբ, Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով և գործող այլ օրենքներով ու օրենսդրական ակտերով:

13.12 Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) և վերակազմավորումը կարող է կատարվել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով:

13.13 Ընկերության վերակազմակերպման, վերակազմավորման հետ կապված այն հարցերը, որոնք պարզաբանված չեն կանոնադրությամբ, Ընկերությունը ղեկավարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածների, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներով և գործող այլ օրենքներով ու օրենսդրական ակտերով:

14. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

14.1. Սույն կանոնադրության նախատեսված ծանուցումները համարվում են պատշաճ, եթե ուղարկված են հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա/ ուղարկված են տվյալ անձի կողմից ընկերությանը տրամադրված փոստային հասցեով
բ/ ֆիզիկական անձանց՝ նույնականացման քարտի հետ մեկտեղ տրվող էլեկտրոնային փոստի հասցեով, եթե անձը ակտիվացրել է այն,

գ/ ուղարկված են տվյալ անձի կողմից ընկերությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով

դ/ հանձնվել է առձեռն

ե/ հրապարակվել է ընկերության պաշտոնական կայքում՝ <http://www.armproject.am/>

զ/ հրապարակվել է էլեկտրոնային զանգվածային միջոցներից առնվազն երկուսում,

է/ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին:

Ծանուցումները փոստային հասցեով ուղարկվում են ստորագրված ծանուցումների բնօրինակները:

Էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում են ստորագրված ծանուցումների բնօրինակների լուսածրված պատճենները:

Առձեռն հանձնվում են ստորագրված ծանուցումների բնօրինակները:

Հրապարակվում է ծանուցումների հաստատված տեքստը:

Ծանուցումը չի կարող ուղարկվել 14.1 կետի ե և գ եղանակներով, եթե ծանուցման տեքստը պարունակում է առևտրային, ծառայողական կամ այլ գաղտնիք:

14.2. Ծանուցողը կարող է իր ընտրությամբ ծանուցումը ուղարկել սույն կանոնադրության 14.1 կետով նշված եղանակներից մեկով կամ մի քանիսով:

14.3. Բաժնետերերի, բաժնետերերի և ընկերության, ընկերության և խորհրդի անդամների /նախկին և ներկա/, ընկերության և վարչության անդամների /նախկին և ներկա/, ընկերության և

գործադիր մարմնի /նախկին և ներկա/, ընկերության և ընկերության աշխատակիցների /նախկին և ներկա/, ընկերության ղեկավար մարմինների միջև հարաբերություններին առնչվող, ինչպես նաև կորպորատիվ հարաբերություններից բխող ցանկացած իրավահարաբերություններում ծանուցումները, ներառյալ դատարանի, արբիտրաժային տրիբունալի, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ուղարկվող ծանուցումները ուղարկվում են սույն կանոնադրության 14.1 կետով նախատեսված կարգով և համարվում են պատշաճ:

14.4 Սույն կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բաժնետերերի և ընկերության միջև ցանկացած հաղորդակցություն և տեղեկատվության փոխանակում իրականացվում է սույն կանոնադրության 14.1 կետով նախատեսված կարգով, Բացառությամբ բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկների, որոնք բաժնետիրոջ կողմից ընկերությանը ուղարկվում են բնօրինակ տեքստով փոստային առաքման միջոցով կամ առձեռն: